ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՈՒՍԱՆՈՂԻ ՂԵԿՈՒՅՑ

2023

ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆԸ

Վաղնջական հայ դպրության
Դու նորօրյա մեր մի ջահն ես,
Դու Գորիսի ուսումնական
Ամենահին մի օջախն ես...

Դու աշխարհին շատ աննման
Կերպարներ ես մատուցանել,
Իսկ սաներդ՝ Նվիրական՝
Մեծ դեմքեր են կյանքում դարձել...

Դու մարդկային ոգի թրծող
Մեր հայահունչ դարբնոցն ես,
Սերունդներին կյանք ուղեկցող
Մաշտոցաշունչ մեր հնոցն ես...

Խոսքը՝ Տիգրան Գրիգորյանի
Նախաձեռնությունը Կարեն Լազարյանի

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Քոլեջ) Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է: Քոլեջի ուսանողը միջին մասնագիական կրթական ծրագրեր յուրացնելու համար, տնօրենի հրամանով, մրցութային հիմունքով ընդունված անձ է, ում տրվում է ուսանողի տոմս եւ ստուգման գրքույկ:

Քոլեջի ուսանողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով նախատեսված կարգով իրավունք ունի՝

- ընտրել տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր եւ տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում է քոլեջը
- մասնակցելու քոլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով խորհրդի կազմում, մասնակցել ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը եւ դրանց աշխատանքներին,
- մասնակցել իր կրթության բովանդակության ձեւավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- ստանալ կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան եւ ձեռք բերել գիտության, տեխնիկայի եւ մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակի համապատասխան գիտելիքներ,
- տանալ երկրորդ մասնագիտություն կամ օգտվելու լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից,
- վճարովի ուսուցման համակարգից փոխադրվել անվճար ուսուցման համակարգ,
- առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ստանալ

ակադեմիական արձակուրդ՝ պահպանելով իր ուսանողական իրավունքը, ինչպես նաեւ վերականգնել ուսումնառությունը որեւէ պատճառով անավարտ թողած իր ուսանողական իրավունքը,

- տեղափոխվել մեկ այլ, այդ թվում՝ նաեւ պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատություն,
- անվճար օգտվել քոլեջի գրադարանից, մարզական եւ առողջարանային, մշակութային-լուսավորչական ծառայություններից,
- մասնակցել քոլեջի հետազոտական, նախագծային աշխատանքների կատարմանը,
- ստանալ ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման պետական նպաստ կամ կրթաթոշակ,
- օգտվել սահանված չափի՝ ներառյալ անվանական, ինչպես նաեւ իրեն ուսման ուղարկած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից, նվիրատվություններից եւ դրամաշնորհներից:
- Հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի կամ զինծառայություն) քոլեջից ազատված ուսանողը վերականգնելիս՝ պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ կամ կրթաթոշակ ստանալու իրավունքը:
- Քոլեջի ուսանողը եւ դիմորդն իրավունք ունեն ծանոթանալու Քոլեջի կանոնադրությանը, քոլեջի լիցենզիային եւ ներքին կանոնակարգերին, ինչպես նաեւ պետական հավատարմագրման վկայականին:

Քոլեջի ուսանողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ, ներքին, կարգապահական կոնոններով նախատեսված կարգով պարտավոր է՝

- կատարել կանոնադրության պահանջները եւ պահպանել ներքին կարգապահության կանոնները,
- խնամքով վերաբերվել քոլեջի գույքին,
- հարգել աշխատողների եւ ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը,
- վճարովի հիմունքներով սովորելիս՝ սահմանված կարգով եւ ժամկետներում վճարել ուսման վարձը,
- կատարել կրթական ծրագրերի պահանջները,
- հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին,
- բարձր պահել քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը,
- պահպանել հասարակության բարոյական նորմերը:

Ստուգարք եւ քննություն

Ստուգարքները, որպես կանոն, հանդիսանում են ուսանողների կողմից կատարվող լաբորատոր, գործնական ու սեմինար պարապմունքների նյութերի յուրացման ստուգման ձեւ:

Ուսանողները պարտավոր են բոլոր ստուգարքները եւ քննությունները հանձնել սահմանված ժամանակացույցերին համապատասխան:

Դասընթացի (առարկա, մոդուլ, պրակտիկա) գնահատման բաղադրիչ է նաեւ ուսանողի ներկայությունը:

Տվյալ առարկայի, մոդուլի, պրակտիկայի դասընթացից անհարգելի բացակայությունների դեպքում ուսանողի ստացած ստուգարքային, քննական, պրակտիկայի գնահատականից հանվում են միավորներ՝ ըստ ստորեւ ներկայացված սանդղակի.

Տվյալ դասաժամից 20 տոկոս անհարգելի բացակայության դեպքում	միավոր չի հանվում
Տվյալ դասաժամից 21-ից մինչեւ 50 տոկոս անհարգելի բացակայության դեպքում	հանվում է 1 միավոր
Տվյալ դասաժամից 51-ից մինչեւ 80 տոկոս անհարգելի բացակայության դեպքում	հանվում է 2 միավոր
Տվյալ դասաժամից 80 եւ ավելի տոկոս անհարգելի բացակայության դեպքում	ստուգարքը կամ քննությունը հանձնվում են ակադեմիական պարտքերի մարման շրջանում:

- Նույն կիսամյակում ուսանողը կարող է ունենալ առավելագույնը մինչեւ 3 ակադեմիական պարտք:
- 4 եւ ավելի ակադեմիական պարտք ունեցող ուսանողը ենթակա է հեռացման այն դեպքում, եթե չի մասնակցել ակադեմիական պարտքերի մարման փուլերին:
- Եթե ուսանողը չի ներայացել 4 եւ ավելի ստուգարքի կամ քննության ու սահմանված ժամկետում բացակայությունը հիմանավորող փաստաթուղթ չի ներկայացրել, ապա ուսանողը ենթակա է հեռացման:

Գնահատականի վերահանձնումը (բողոքարկումը)

Ուսանողների կողմից ստացած գնահատականների վերահանձնումների (բողքարկումների) առավելագույն քանակ է համարվում յուրաքանչյուր կիսամյակի համար 2 առարկան/մոդուլը, յուրաքանչյուրից առավելագույնը 2 անգամ:

➢ Նախաավարտական կիսամյակում վերահանձնումներ չեն թույլատրվում, բացառությամբ ամբողջ ուսումնառության ընթացքում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

Ուսանողների կողմից ստացած գնահատականների վերահանձնումը կատարվում է հետեւյալ կերպ:

➢ Բանավոր ստուգարքը/քննությունը բողոքարկվում է քննասենյակից դուրս չգալով:

➢ Գրավոր ստուգարքի/քննության բողոքարկման համար գրավորի ստուգման եւ գնահատականների հրապարակման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում ուսանողն ուսումնական գծով փոխտնօրենին է ներկայացնում գրավոր դիմում:

Ուսանողների գիտելիքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 10 միավորանոց սանդղակը

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
1	շատ վատ կամ անբավարար
2	վատ կամ անբավարար
3	անբավարար
4	բավարար
5	միջին կամ բավարար
6	միջինից բարձր
7	լավ
8	շատ լավ
9	գերազանց
10	բացառիկ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ԵՆ 20 ԲԱԼՈՎ

0-ից 7 միավոր	2 (անբավարար)
8-ից 12 միավոր	3 (բավարար)
13-ից 17 միավոր	4 (լավ)
18-ից 20 միավոր	5 (գերազանց)

Չտարբերակված ստուգարքները գնահատվում են՝ «ստուգված», «չստուգված» եղանակով:

ՊՐԱԿՏԻԿԱ

Պրակտիկան ուսումնառության բաղկացուցիչ մասն է, որը հնարավորություն է ընձեռում ստացած գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, ձեռք բերել մասնագիտական հմտություններ եւ փորձառություն:

Գորիսի պետական քոլեջի ուսանողների համար կազմակերպվում է ***ուսումնական, արտադրական եւ նախաավարտական*** պրակտիկաներ:

Ուսումնական պրակտիկայի հիմնական նպատակն է յուրացված տեսական գիտելիքների ամրապնդումը, ինչպես եւ ուսանողների հմտությունների ու կարողությունների ձեւավորումը:

Քոլեջում կազմակերպվում է երկու տեսակի (ըստ մասնագիտությունների) ուսումնական պրակտիկա՝ ***ուսումնական պրակտիկա՝ տեսական ուսուցմամբ, եւ ուսումնական պրակտիկա՝ առանց տեսական ուսուցման:***

Ուսումնական պրակտիկաներն անցկացվում են բավարար կահավորում եւ տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաեւ կազմակերպություններում ու հաստատություններում:

Արտադրական պրակտիկայի հիմնական նպատակն է ուսանողների մոտ գործնական աշխատանքների հիման վրա մասնագիտական հմտությունների ձեւավորումը:

Արտադրական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

Նախաավարտական պրակտիկայի հիմնական նպատակն է ուսանողներին նախապատրաստել պետական ամփոփիչ ատեստավորմանը՝ նրանց մոտ գործնական աշխատանքների հիման վրա ձեւավորելով մասնագիտական հմտություններ:

Նախաավարտական պրակտիկաներն անցկացվում են բավարար կահավորում եւ տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաեւ կազմակերպություններում ու հաստատություններում:

ՊՐԱԿՏԻԿԱՆՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ուսանողը պրակտիկայի ընթացքում պարտավոր է՝

- կատարել պրակտիկայի ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները,
- ենթարկվել պրակտիկան իրականացնող հաստատության աշխատանքային ներքին կանոնակարգին,
- պրակտիկայի օրագիր-հաշվետվությունում կատարել կարճ գրառումներ՝

նշելով կատարված աշխատանքի թեմաները,

- պրակտիկայի ավարտին գրել վերլուծություն՝ ժամաքանակի 10%-ի չափով, օգտագործել պրակտիկայի ժամանակ արված լուսանկարներ՝ նվազագույնը 3 հատ,
- Պրակտիկայի ավարտից հետո օրագիրը ներկայացնել պրակտիկայի բաժին

Պրակտիկանտ ուսանողի իրավունքներն են՝

- ծանոթանալ իր գործունեությանը վերաբերող ղեկավարության որոշումներին,
- ծանոթանալ պրակտիկայի ընթացքում հաստատության աշխատանքային պլաններին (պրակտիկայի անցկացման վերաբերյալ), պայմաններին ու հնարավորություններին,
- մասնակցել հաստատության կազմակերպած միջոցառումների, հանդես բերել նախաձեռություն եւ ստեղծագործական մոտեցում,
- ինքնուրույն ընտրել աշխատանքի թեման, տեսակները եւ ձեւերը

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Պրակտիկան գնահատվում է ստուգարքի ձեւով: Գնահատվում է այն դեպքում, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային, կատարել ծրագրով նախատեսված առաջադրանքները, սահմանված ժամկետում ներկայացրել պրակտիկայի վերաբերյալ ավարտուն օրագիր-հաշվետվությունը:

Պրակտիկաների գնահատման համար հիմք է հանդիսանում ուսանողի մասնակցությունը պրակտիկային, կազմած հաշվետվության որակը եւ բովանդակությունը, ինչպես նաեւ նրա ցուցաբերած ինքնուրույնությունը եւ ակտիվությունը:

Պրակտիկան գնահատում են տարբերակված ստուգարքով՝ 10 բալանոց սանդղակով (տես՝ Գնահատման համակարգը, էջ 4):

- Եթե պրակտիկանտը պրակտիկայի համար նախատեսված ժամաքանակի 50 տոկոս եւ ավելի բացակայի ու բացակայությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնի, այդ դեպքում նրա բացակայությունը կհամարվի հարգելի եւ նրան կթուլատրվի առանց ուսումնական պարապմունքներից կտրվելու կրկին անցնել պրակտիկա:
- Պրակտիկայի կրկնակի անցկացման թույլտվության համար ուսանողը տնօրենին է ներկայացնում գրավոր դիմում, որը կցվում է օրագիր-հաշվետվությանը:
- Մասնագիտությամբ աշխատող ուսանողը կարող է մասնագիտական պրակտիկան անցնել իր աշխատավայրում՝ ներկայացնելով համապատասխան տեղեկանք:
- Մասնագիտական պրակտիկան չանցած ուսանողը հեռացվում է քոլեջից:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գորիսի պետական քոլեջի Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈՒԽ) ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման եւ ուսանողների շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմին է:

ԳՊՔ-ի ՈՒԽ-ի նպատակն է՝

- պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- ապահովել ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարմանը,
- քոլեջի կառավարման համապատասխան մարմիններին ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,
- մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպանը եւ ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների եւ պարտականությունների մասին,
- միավորել քոլեջի ուսանողների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձեւավորմանն ու խթանելու ուսանողների հետազոտական, կրթական, հոգեւոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,
- աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- մասնակցել ԳՊՔ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,

Գորիսի պետական քոլեջում գործում է ՈՒԽ-ի հետեւյալ հանձնաժողովները՝

- Կազմակերպման, մշակույթի եւ ազատ ժամանցի հանձնաժողով
- Կրթության, ուսուցման եւ սպորտի հանձնաժողով
- Արտաքին կապերի հանձնաժողով
- Մամուլի եւ լրատվության հանձնաժողով

Ուսուցման ներքին կարգապահական կանոններ

✓ Քոլեջի տարածքում ուսանողները պարտավոր են ունենալ ուսանողական տոմս: Ժամը 16-00-ից հետո մուտքը քոլեջ թուլատրվում է միայն ուսանողական տոմսի կամ ստուգարքային գրքույկի ներկայացման դեպքում:

✓ Ուսանողները քոլեջի դասախոսների եւ այլ աշխատակիցների նկատմամբ ցուցաբերում են հարգալից վերաբերմունք, ճշտապահություն, հանդուրժողականություն, ինչպես եւ քաղաքավարի վարքագիծ:

✓ Քոլեջում եւ հատկապես լսարանների մոտ արգելվում է աղմկել, բարձր խոսել, դասերի ժամանակ անհարկի անցուդարձ անել:

✓ Ուսանղները դասերին պետք է ներկայանան սահմանված ժամկետին: Ուշացման դեպքում ուսանողը մատյանում ստանում է «բացակա»:

✓ Դասերի ժամանակ լսարանից դուրս գալ ուսանողը կարող է միայն դասախոսի թույլտվությամբ:

✓ Ուսանողի բացակայությունները համարվում են հարգելի, եթե ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր:

✓ Ուսանողին դասերից բացակայելու թույլտվություն է տալիս ուսումնական մասի ղեկավարը՝ մասնագիտության պատասխանատուի (կուրսղեկի) բանավոր տեղեկացմամբ եւ ուսանողի գրավոր դիմումի համաձայն: Երկարաժամկետ բացակայելու դեպքում տնօրենի թուլտվությամբ՝ համապատասխան փաստաթղթերի ներկայացմամբ:

✓ Ուսանողի անհարգելի բացակայության համար սահմանվում են հետեւյալ պատժաչափերը՝
բանավոր զգուշացում-36 ժամ,
նկատողություն-72 ժամ,
խիստ նկատողություն- 144 ժամ,
հեռացում-216 ժամ:

✓ Քոլեջի անունից այլ կազմակերպություններում եւ արտերկրում հանդես գալու դեպքում սովորողները ցուցաբերում են պատշաճ վարքագիծ՝ բարձր պահելով քոլեջի վարկանիշը

✓ Սովորողի կողմից ներքին կարգապահական կանոնների խախտումը կարող է քոլեջի կողմից պայմանագրի լուծման հիմք լինել:

Ուսումնական հաջողությունների խրախուսումը

Ուսման առաջավորներին՝ պարտականությունները բարեխիղճ կատարելու եւ հասարակական ակտիվություն ցուցաբերելու համար, ԳՊՔ-ում սահմանվում է խրախուսանքի հետեւյալ միջոցները՝

1. Գրավոր շնորհակալություն,
2. Պարգեւատրում հուշանվերով,
3. Պարգեւատրում դրամական պարգեւով,
4. Ուսման վճարի չափի զեղչում:

Կարիերայի կենտրոն

Գորիսի պետական քոլեջի Կարիերայի ստորաբաժանումը պատասխանատու է ուսանողների կարիերայի արդյունավետ ուղղորդման ծառայությունների մատուցման համար: Այդ ծառայություններն ընդգրկում են չորս հիմնական շրջանակ՝

- ***Տեղեկատվություն.*** ճշգրիտ եւ թարմ տեղեկատվության տրամադրում ուսանողին՝ նրա կարիերայի (մասնագիտության, մասնագիտական ուսումնական հաստատության, զբաղմունքի, աշխատատեղի եւ այլն), հնարավորությունների, մասնագիտական առաջխաղացման ուղիների եւ ընտրության ենթակա տարբերակների, ինչպես նաեւ այն մասին, թե ինչպես կարելի է գտնել անհրաժեշտ աջակցություն եւ խորհրդատվություն:
- ***Խորհրդատվություն.*** հոգեբանամանկավարժական տարբեր մեթոդների կիրառմամբ խորհրդատվության տրամադրում՝ նպատակ ունենալով ուսանողին օգնել հասկանալու, մեկնաբանելու տեղեկատվությունը եւ այն կիրառելու անհրաժեշտությանը համապատասխան:
- ***Ուղղորդում.*** անաչառ եւ անկողմնակալ կողմնորոշման ծառայության տրամադրում եւ մասնագիտական աջակցություն՝ նպատակ ունենալով, որ ուսանողը հասկանա իր անձնային հնարավորությունների եւ նախասիրությունների անհամապատասխանության պատճառները, հաղթահարի խոչընդոտները, լուծի կոնֆլիկտները, ձեռք բերի նոր տեսակետներ եւ ունենա առաջընթաց:
- ***Կոնպետեցիաների զարգացում.*** ոչ ֆորմալ դասընթացների միջոցով ուսանողների կարիերայի պլանավորման եւ կառավարման, այդ թվում՝ զբաղվածության, ձեռներեցության եւ առանցքային այլ կարողությունների ձեւավորում ու զարգացում՝ նպատակ ունենալով նպաստել առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող ուսանողների մրցունակության բարձրացմանը:

ԳՐԱԴԱՐԱՆ

Գորիսի պետական քոլեջի գրադարանը հանդիսանում է քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներից մեկը, որտեղից կարող են օգտվել ոչ միայն քոլեջի դասախոսական եւ ուսումնաօժանդակ կազմը, այլեւ քոլեջի ուսանողները:

Քոլեջի գրադարանը կազմված է նաեւ ընթերցասրահից: Գրադարանում պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ եւ քննարկումներ:

Ընթերցողի պարտականությունները եւ գրադարանից օգտվելու կանոնները

1. Ընթերցողը կրում է նյութական պատասխանատվություն գրադարանին պատճառած վնասի համար:
2. Գրադարանում գրանցվելու համար ուսանողը ներկայացնում է ուսանողական տոմս:
3. Գիրք կորցնելու կամ վնասելու դեպքում ընթերցողը պարտավոր է վերադարձնել նույն գիրքը կամ կրկնակի արժեք ունեցող՝ գրադարանի համար անհրաժեշտ այլ գիրք:
4. Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ուսանողը պարտավոր է հանձնել իր մոտ եղած գրականությունը:
5. Ընթերցողը գրադարանից կարող է օգտվել ե՛ւ ընթերցասրահում, ե՛ւ տուն տանելու միջոցով:
6. Եթե ընթերցողն ազատվում կամ հեռացվում է Քոլեջից, նա պարտավոր է վերադարձնել իր մոտ եղած գրականությունը եւ հաշվապահություն ներկայացնել շրջիկ թերթիկ՝ գրադարանի տեղեկատվությամբ:
7. Ուսումնական գրականությունը կարող է դուրս տրվել մինչև ուսումնական տարվա վերջը:
8. Տրված ժամկետից երկար պահելու նպատակով գիրքը ներկայացվում է գրադարան՝ երկարացնելու համար:
9. Բառարանները, տեղեկատուները, հանրագիտարանները և մեկ օրինակ գրքերը դուրս չեն տրվում: Նմանատիպ գրքերից օգտվում են ընթերցասրահում:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ

Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած անվճար ուսուցման տեղերի քանակին համապատասխան՝ ուսանողական նպաստ տրվում է՝

1) առաջին ուսումնական տարում՝ մրցույթի արդյունքներով ուսումնական հաստատություն ընդունելության կարգով անվճար ուսուցման տեղեր ընդունված ուսանողին, իսկ հաջորդ ուսումնական տարվանից՝ նախորդ ուսումնական տարվա առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողին՝ փոխատեղման արդյունքում,

2) միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնական հաստատություն ընդունված «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց,

3) «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ֆունկցիոնալության ծանր և խոր, իսկ երեխաների դեպքում նաև միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց (երեխաներին),

4) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության (ծանր և խոր աստիճանի ֆունկցիոնալության սահմանափակմամբ) զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ծնողների, ամուսնու (կնոջ) մինչև 27 տարեկան զավակներին։

Քոլեջը վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչեւ 10 տոկոսին, հաշվի առնելով Քոլեջի ֆինանսական միջոցները եւ ուսանողի սոցիալական վիճակն ու բարձր առաջադիմությունը, իր միջոցների հաշվին կարող է մասնակի փոխհատուցել ուսման վճարը՝

- սոցիալապես անապահով ուսանողներին,
- միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին,
- 3 եւ ավելի անչափահաս կամ 3 եւ ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին,
- վճարովի ուսուցման համակարգում երկու եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին,
- 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին,
- հեռավոր լեռնային եւ սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին,
- մինչեւ մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին,
- ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ուսումնական հաստատության հայեցողությամբ,
- Քոլեջում առնվազն 5 տարվա անընդմեջ աշխատանքնային ստաժ ունեցող աշխատակիցների երեխա-ուսանողներին։